

Պարսկական բանասանդուքիւն (*)

Ղ Ա Զ Ա Լ

Մի օր փարափից դէպ վեր սըլացաւ մի արծիւ

Պարէնը հայթայթելու. թեւերը յարդարեց.

Խըրոխտ թեւերի տեսից գոռոզացաւ, ասաց.

«Ահա ողջ տիեզերքն իմ թեւերի տակ փռուեց».

«Երբ ֆախրում եմ գեւիթում, իմ կտրուկ հայեացքով

«Այն մագն էլ եմ տեսնում որ պառկած է ծովընկէց:

«Եթէ խըռիւի կոյտից մըժեղ շարժուի յանկարծ,

«Պատկերը նայուածքիս մէջ կը ցոլայ յեցիյեց:

«Ո՞վ կարող է ինձ նըման ֆախրել ողջ աշխարհում –

«Քեարֆա՞ս(1), կոկնո՞ս(2), թէ՞ սիմորդ(3), այն որ
օնդա(4) կոչուեց»:

Յանկարծ դարանից ուժգին լարուած մի ձիգ աղեղ

(1) Քեարֆեսա – ցին.

(2) Կոկնոս (դոդնոս) – երեւակայական հրային մի
թռչուն՝ սալամանդրի հետ նոյնացրած.

(3) Սիմորդ, որ եւ օնդա էր կոչւում – մի հսկայական
երեւակայական թռչուն, որ ապրում էր Կովկասեան սարե-
րում:

*) Այս երեք «Ղազար»ներու թարգմանութեան մէջ բը-
նագրին չափը նոնյութեամբ պահպանուած է. (առաջինը՝
7-6, երկրորդինը եւ երրորդինը՝ 6-5):

Անանընկալ մահառիթ մի նետ դէպ նա ուղղեց.
 Եւ այն նետը արնախանձ արծւի թեւին հասաւ
 Եւ բարձունքի ոլորտից նըրան ցած գըլորեց ...
 Տարաբախտը վայր ընկաւ, թրպրտաց ինչպէս ձուկ,
 Այնժամ նա աջ ու ահեակ իր աչքերը յառեց.
 Ապշած էր նա, թէ ի՛նչպէս փայտից ու երկաթից
 Այսպիսի արագաշունչ սըլացում բըռնկուեց:
 Երբ տնողեց՝ իր փետուրը յանկարծ տեսաւ այնտեղ,
 Ասաց՝ «Էլ ի՞նչ հառաչեմ. իմը ինձ տապալեց...»:
 Խոսքով, հանի՛ր քո գլխից գոռոգութիւնդ անմիտ.
 Տեսա՞ր գոռ արծւի գլխին ի՛նչ սեւ օրհաս մայրեց ...

ՆԱՍԷՐԷ ԽՈՍՐՈՎ (10րդ դար)

ՂԱԶԱԼ ՌՈՒԴԱԳԻԻ

Ուրախ ապրիր հետը կոյսին գեղանի,
 Կեանքը բարուրանք է, դատարկ ու քամի.
 Ինչ բախտն է բերել՝ թո՛ղ քեզ չուրախացնէ,
 Եւ անցածի համար դու դարդ մի՛ անի:
 Ես ու այն մուշկ – յամպար խոպոպը բուրիչ,
 Ես ու այն հուրի զարմ պատկերը լուսնի:
 Ուտող ու բաշխողն է՝ կեանքում՝ երջանիկ,
 Դժբախտ է, ով բաշխած ու կերած չունի.
 Այս աշխարհը միայն քամի է ու ամպ,
 Գինի՛ր բեր, ինչ պէտք է լինի թող լինի:

ՌՈՒԴԱՔԻ (10րդ դար):

ՂԱԶԱԼ ԴԱՂԻՂԻԻ

Սի՛րս իմ, ահա գրցեց ամպը գարնային
 Մայիսի խալաթը երկրի ուսերին,
 Աշխարհն այնպէս է մեղմացել, որ դաշտում
 Վազրը խաղ է բռնում հետը սարայծին:
 Գետինն արիւնոտած դիպակ է կարծես,
 Օդը մուշկ է դարձել՝ բեհեզը հագին:
 Ասես անապատում գինով ու մուշկով
 Պատուէր ես քելադրում սիրածդ էակին:
 Կուռքը՝ (1) դէմքը գմայլիչ յակինթ է կտրել,
 Մեհեանի հանդերձի գոյն ունի գինին:
 Աշխարհը պննել է ինչպէս սիրամարգ,
 Մի կողմը խորտուքորտ, ողորկ է միւս դին.
 Վարդից վարդաջրի բուրմունք է ծորում,
 Ասես վարդի բոյրը խառնած է վարդին:
 Դաղիղին ընտրել է լոկ չորս յատկութիւն
 Լաւ ու վատից, որ կայ երկրի երեսին.
 Յակինթ շրթունք, ապա չանգի (2) հեծեծանք,
 Զարդոշտի կրօնն ու կասկարմիր գինին:

ԴԱՂԻՂԻ (10րդ դար)

Պարսկ. բնագրէն թարգմ. ՌՌԻԲԷՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Թէհրան

(1) Սիրուհին. (2) վաղեմի երաժշտական գործիք,
 քնարի մի տեսակը, ծուռ գլխով: